Առաջնորդի խօսքերը ինձ բոլորովին հանգստացնել չկարողացան, երբ յանկարծ մտաբերեցի նապաստակը, այն չարագուշակ նապաստակը, որ մեր ճանապարհը խաչաձեւ կտրելով անցաւ: Ես մտածում էի, որ անպատճառ մի դժբախտութիւն կը պատահի:

Երբեմն պատահում էին քրդուհիներ, որոնք խմբով կամ միայնակ դիմում էին դէպի մերձակայ լեռների ստորոտները, ուր գտնւում էին նրանց չադրները: Ցաւալի էր նայել այդ թշուառների վրայ: Պատառոտած հագուստով, բոբիկ ոտներով գնում էին նրանք տատասկներով պատած ճանապարհով, որը, յաճախ երթեւեկութեան ուղի չլինելով, աւելի մի նեղ շաւիղի էր նմանւում: Նրանցից իւրաքանչիւրը ծանրաբեռնուած էր չորացած թուփերի ու արմատների շալակներով, որ քաղել էր մերձակայ բլուրներից, տանում էր վառելու համար: Ամուսինները այնպէս փառաւոր նժոյգների վրայ նստած, իսկ կանայք, այդպէս ողորմելի, հեծում էին ծանր բեռների ներքոյ: Ես կրկին դարձայ դէպի մեր առաջնորդը:

— Դրանք որտեղացի՞ են:

— Քրդի համար կարելի՞ է ասել՝ որտեղացի է: Խաշնարածներ են, այսօր այստեղ են, էգուց կը տեսնէք նրանց՝ տասն սարերի այն կողմում:

Չնայելով, որ արեւը բաւական թեքուել էր, եւ երեկոյեան ժամը մօտենում էր, բայց օդը դեռ բոլորովին չէր զովացել: Ծարաւը այրում էր ինձ. մի կաթիլ ջրի համար հոգիս կը տայի, բայց դեռ շատ հեռու պիտի գնայինք, մինչեւ ջրի կը հասնէինք:

— Ես հետս Արտամեդի խնձոր ունեմ վերառած, — ասաց մեր առաջնորդը, — դա կզովացնէ:

Նա կանգնեցրեց իր ձին, ցած իջաւ եւ խուրջինի միջից հանեց մի քանի հիւթալի, թթուաշ խնձորներ, տուեց ինձ: Այդ միջոցին քրդուհիները հասան մեզ: Ես դանակով կեղեւը կճպում էի եւ մեծ ախորժակով ուտում: Իսկ խեղճ կանայք գետնից հաւաքում էին հողի վրայ թափուած կեղեւները եւ նոյն ախորժակով ուտում էին: Նրանց համար այդ անուշեղէնը այնքան հրապուրիչ էր, որ չնայելով իրանց շալակների ծանրութեանը, վազ էին տալիս մեր ձիաների ետեւից: Այդ տեսնելով, երիտասարդը տուեց նրանց մի-մի խնձոր: Անկարելի է նկարագրել նրանց ուրախութիւնը:

— Դու քանի՞ սիրող ունես, — հարցրեց մէկից:

— Ես ամուսին ունեմ, — ծիծաղելով պատասխանեց քրդուհին, — բայց սիրողներ դա՛ շատ ունի, հողե՛մ դրա գլուխը: